



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Հ. Գրքեր 2099 Բ

2099 Բ Կ

ՅՆՈՐՔ ԵՒ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆՔ


ՏՈՒԹԵՕՐ ՀԻՉՄԱՆԵԱՆԻ

ՅԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԻ

ՅՕՐԹԱԳԻՂ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
— 1873 —



ՋՆՈՐՔ ԵՒ ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆՔ

ՏՈՒԹԻՕՐ ՀԻՇՄԱՆԵԱՆԻ

ՄԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐՍՆԻ

ՅՕՐԹԱԳԻՒՂ



ԿՈՍՏԱՆԳՆՈՒԳՈՒԼԻՍ

— 1873 —

ՔԱՆԻ ԾՐ ԽՕՍԳ

ՇԻՇԾԱՆԵԱՆ ՅՈՎԱԿԻՓ ԷՖԷՆՏԻԻ

ՕՐԹԱԳԻԻՂԻ ԱԶԳԱՅԻՆ ԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ

ԽՕՍԱՄ ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՑ

Տօքթէօր Շիշմանեան էֆէնտի իւր բազմաթիւ գրութեանցը և գործոցը հատորիկ մ'ալ աւելցուց այս վերջին ամիսներս: Արդի Քաղաքակա նութեան և յառաջագիմութեան արէգակէն նոր ճառադայթ մ'ալ ծագեց Հայ ազգին վրայ: . . .

Մեր այս ներկայ տետրին մէջ մեր նպատակը Շիշմանեան էֆէնտիին գաղափարները կարճաօտիւ քննադատել է, և անոնց բուն միտքը հասկըցնել իւր տետրը կարգացողներուն. սակայն այս քննութիւնս ընելու սկսելնէս առաջ հարցում մը հարկ կը համարիմ ընել և որմէ շնորհակալ չի պիտի ըլլայ անշուշտ մեր Տօքթէօրը:

—Խ'նչ բանէ առաջ կրնայ գալ որ մարդ ազատ իւր մտածածը խօսելու, գրելու որ գայ իւր խօսածը չի կարենայ ամբողջ գրել, այս բանս մեզ



քիչ մը կասկածանք կը պատճառէ, մեծապատիւ էֆէնտինին խօսածներուն ճշմարտութեանը վրայ, վասն զի մարդս ազատ է խօսելու, սակայն երբ կ'ուզէ իւր խօսածը գրել հարկ է որ զանի ամբողջապէս գրէ ինչպէս խօսեցաւ, օրինակի յաղագար խօսած ատենը նոյն մեծապատիւ էֆէնտին Պոսիւէի Տիեզերական Պատմութեան վրայ գրած ճառին համար առասպել է ըստ, և գրքին մէջ այսինքն տպուածին մէջ այսպէս ըսն մը չիկայ. նմանապէս ասոր նման հաղարումէկ ուրիշ ըսներ, սւտի ինչպէս ըսինք այս կը ճատումները մեղի կասկածանաց տեղի կուտան թէ արդեօք քննադատութեան շոշափելի փաստ մը չի տալ՞ համար ըրաւ զայս. սակայն ինչ որ ալ ըլլայ այնպիսի հակատութիւններով լեցուած էր այս ազգը լուսաւորելու համար շինուած տետրը որ պակաս բաները ամենեւին չըլլային ալ հոգ չէր:

Այս ալ չի մտնանք ըսելու որ, մեծապատիւ էֆէնտինին խօսուածքին և նայն իսկ գրուածքին մէջ մեծ կերք մը կը նշմարուի մեծ կերք մը անտի—կրօնական որ զինքը մինչեւ մտլութեան կը տանի (այսինքն կրօնամարտութեան հակառակ մարտութեան) երկրորդաբար մթութիւն մը որ չենք գիտեր թէ նայն իսկ դադարաբաններուն մթութենէն կրնայ առաջ դալ թէ լեզուին մարտութենէն, եթէ այս վերջինս է, ըսել է թէ Տոքթօր Եիշմանեան էֆէնտին նորազանդ Ամերիքացոց Հայկաբանութեան սուած գասէն մեծ օգուտ մը չէ քաղած,

սակայն ինքը գոնէ այն նորազանդից չափ մարտը Հայերէն մը պէտք էր ունենալ, գոնէ ստութիւնը ճշմարտութեան գունով ներկելու համար:

Ուրեմն Տոքթօր Եիշմանեան էֆէնտին Օրթոգրաֆի Ս. զգային Լսարանին մէջ, «Եւրոպական քաղաքականութեան այս դարու» մէջ Հայ ազգին վրայ ունեցած ազդեցութեանը վրայ կը ճառէ, և երանի թէ իւր ճառած կերպովը չի ճառէր երբէք, վերջապէս իրեն համար ալ աղէկ կըլլար եթէ Մ. Եուսուֆեան էֆէնտինին պէս որ Մ. Կիզոի և այլոց գրքերէն թարգմանաբար ըսն մը խօսեցաւ» ինքն ալ անոր պէս ընէր, վասն զի այն ատեն շատ մարդիկ իւր քանքարին ծանրութիւնը կամ թեթեւութիւնը տակաւին լաւ մը չէին հասկընար, որոնց մէջ անշուշտ մենք ալ իւր մտադիր ունկնդիրը պիտի գտնուէինք, սակայն որչափ զարմացանք երբ կարդացինք թէ մինչեւ հիմայ Հայոց ազգին քաղաքականութեան մէջ առաջ չերթալը իւր կրօնական փողովուրդ մը ըլլալն է որով խըտոց մը կայ իրեն և քաղաքականութեան գործիքներուն մէջ, միւս կողմանէ քիչ մը ետքը կրսէ թէ Մահմէտական կրօնը քաղաքակրթութեան հետ կը յարմարի, Տոքթօր այս երկու խօսքերս իրարու մօտեցնելու համար, քեզի՞ քու լուսոյդ հարկաւորութիւն ունիմք, եթէ Մահմէտական կրօնը այն աստիճանի կը յարմարի քաղաքակրթութեան հետ որ մինչեւ Եւրոպիոյ լոյս մատակարարէ, կարելի է որ Քրիստոնէութիւնը քաղաքականութեան արդելք ըլլայ. եթէ ըսենք

Մալք Բարսեղյան
Կիլիկիա 1890 թ. 10 ամի 15 օր

Մալք Բարսեղյան

մեր Տոբթէօրին հետ թէ առաջինը կը յարմարի և վերջինը ո՛չ, այն ատեն պիտի հետեւի թէ Հայ ազգին կրօնքը և քաղաքականութիւնը իրարու հասական բաներ են. եթէ այս այսպէս է ինչո՞ւ համար կուզէ ուրեմն բոլոր ազգը մէկ ընել և կը ցաւի որ Կաթողիկոսներն և Բրօդէսթանները բաժնուցան Եջմիածնականացմէ ուրեմն չուզեր որ ազգս ճշմարիտ քաղաքակրթութիւն ունենայ կը տեսնէ՞ք հիմա մեծապատիւ Տոբթէօր Զեր խօսքը ո՞ւր կը տանի զԶեզ, ուրեմն տեսէ՞ք ի՞նչ բանէ Հայոց ազգին մեծագոյն մասին տակաւին քաղաքակրթութեան մէջ առաջ չերթալուն պատճառը :

Նախապաշարմունքն է մեր ազգին մեծագոյն մասին քաղաքակրթութեան մէջ առաջ չերթալուն պատճառը, ասոր վրայ կուզէք նէ տգիտութիւնն ալ աւելցուցէք որ այս մասը խաւարին մէջ կը թաղէ և կիրք մ'ալ որ չուզեր երբէք որ այս նախապաշարումն և տգիտութիւնը վերնայ ազգին վրայէն կուզէ ալ նէ չափով մը կուզէ, այսինքն նիւթական գիտութիւններ սորվուին, բայց բարոյականներ երբէք, ասկէց կրնաք լաւ հասկընալ թէ ազգին մէջ բաւական ֆիզիքա, մաթեմատիք, արտաքին պատմութիւն, եւայլն, եւայլն քիչ շատ գիտցողներ կը գտնուին, սակայն բուն Եւրոպացիները քաղաքակրթող գիտութիւններ, այս է, բարոյական, ճշմարիտ Փիլիսոփայութիւն, Սատուածաբանութիւն, ազգին այս մեծագոյն մասին մէջ բոլորովին կը պակտին, այս ալ լաւ հասկցէք որ Փիլիսոփայու-

թիւն ըսելով Վոլթերինը և Ռուսոյինը չեմ հասկընար թէ պէտեւ այն ալ կը պակտի ազգին մէջ, և միայն Զեզի պէս քանի մը գիտնական անձանց քով կը գտնուի : Ուստի այս մասին մէջ Զեր ալ գտնուիլը յայտնի կընէք ըսելով որ յանցանքը քաղաքականութեան գործիքներուն է որ իրենց քարոզիչներէն մեր վրայ տեղեկութիւններ առած են և սխալ գաղափարներ, սխալ տեղեկութիւնք իրենց քով ճշմարտութեան զօրութիւն ունեցեր են, վասն զի այս քարոզիչները գիտուններ և փիլիսոփայներ չեն եղեր, այլ Սատուածաբաններ և Միսիօնարներ, որք լոկ Սատուածաբանական խնդիրներ կը յուզեն եղեր, և որ Սատուածաբանութիւնը շատ նախապաշարմունք կը պարփակէ եղեր : Աւելի յայտնի խօսիլ ճշմարտութեան յատկութիւնն է, ի՞նչ ըսել կուզէք Պարոն բժիշկ երբ կըսէք թէ Սատուածաբանութիւնը շատ նախապաշարմունքներ կը պարփակէ, ըսել կուզէք թէ այն Լատինացի քարոզչաց յարուցած Սատուածաբանութեան խնդիրներն, քու Հին Հայրենի Եկեղեցի կոչած կրօնքդ զօր դու չես ճանչէր նախապաշարմունքներ էին, այսինքն Հոգւոյն Սրբոյ 'ի Հօրէ միայն կամ 'ի յՈրդւոյ և 'ի Հօրէ 'ի միասին բխելը, Քաւարանի մը ըլլալը կամ չըլլալը, Պետրոսի Առաքելոյ գլուխ Եկեղեցւոյ ըլլալը կամ չըլլալը, ասոնք ըստ Զեզ նախապաշարմունքներ են այնպէս չէ. եթէ յիշաւի այսպէս է, ըսել է թէ դուք չէք գիտեր տակաւին նախապաշարման ի՞նչ

Ստուածաբանութիւնը ինչպէս կը շարժուի
 ինչպէս կը շարժուի Քիւրաքի

քան ըլլալը, ըսել է թէ կրօնի վրայ ամենափոքր
 անդեկուծիւնը չունիք, և եթէ չունիք ինչո՞ւ ճշ-
 մարտութիւնը Ձեզ ստանձեալ կարծելով Հայ ժո-
 դովուրդը լուսաւորելու պարտքը Ձեր վրան կառ-
 նուք, և ո՞վ տուաւ Ձեզ այս հոգը, պարտաբան
 էք ըրեր, երբ չունիք հարկաւոր եղած դիտու-
 թիւնը, նախապաշարմունք կըսէք իրողութեան մը,
 մինչդեռ Ստաուածաբանութիւն և Փիլիսոփայու-
 թիւնն ի՞նչ ըսել է չէք գիտեր, որ գիտուն ըլլա-
 լու համար Փիլիսոփայ ըլլալու է կըսէք ոչ թէ Ստա-
ուածաբան : Խեղճ բժիշկ, որ ճշմարտութիւնը ի-
 բեն ստանձեալ կարծելով կեխէ հրապարակա-
 իւր խորին գիտութիւնը կը քարոզէ զոր պիտի անա-
 նենք հիմա որչափ թանձր է եղեր :

Մեր մեծահանճար և ազգասէր Տօքթէօր Նիշ-
 մանեան էֆէնտին որ իւր գրութեամբը ամենուս
 ծանօթ է, չի գիտեր ամենեւին Վիլլօրի մեր ազ-
 դին վրայ ունեցած բազմալատտակ գրութիւննե-
 րը, Ռիանսէյի, Տարրասի Ռոհրպարի պատմա-
 կան հմուտ գրքերը, չէ՞ լսած արդեօք ամենեւին
 Պօռէի մը անունը և չէ՞ առած ձեռքը իւր գրած
 Հայոց պատմութիւնը, չի՞ գիտեր բնաւ իւր քանի
 մը անգամ Հայաստան ըրած ճամբորդութիւնները,
 այս ի՞նչ աստիճանի տգիտութիւն չի գիտնալ այս-
 չափ ծանր հեղինակութիւնները և յիշել միայն
 այն պատմիչը որ Հայոց միայն թաղաւոր կուտայ,
 Տիգրան Ա. Տիգրան Բ. Տիգրան Գ. ի՞նչ խեղճու-
 թիւն ո՞վ Ստաուած ո՞րչափ ցածր իջեր ենք եղեր

Գրքեր և Գրքագրութեան

և ասկից վերջն ալ տեսէք ի՞նչ կը յաւելու մեր
 ճշմարտախօս և մեծիմաստ բժիշկը «Եւ ի՞նչ զար-
 մանք, երբ այսօր ուղիղ դատողութեանց դարու
 մէջ կապրինք միթէ սխալ գաղափարներ ամեն օր
 յայտնի չէ՞ն քարոզուիր և ս՛ր պատմութիւնը կը
 ստէ» : Եւ ո՞վ է ուրեմն պատմութիւնը ստողը,
 այսչափ ամենուս յայտնի ճշմարտութիւնները քա-
 յարձակ ուրանալ, և բողբ Եւրոպական ազգերը
 մեր ազգին վրայ տգէտ են ըսել, և դիտցած ըլլաք
 Պ. Տօքթէօր որ հաս չի յիշեցի խել մը Սնգղիացի
 պատմաբաններ և ճանապարհորդներ, նմանապէս
 և Գերմանացիներ, չի յիշեցի նմանապէս մեր խել
 մը պատմական հեղինակաց Եւրոպական լեզուներ
 թարգմանուած ըլլալը, ինչպէս են Խորենացին,
 Ս. Գաթանդեղոս եւայլն, եւայլն, և նոյն խել Չա-
 միշեանի եռահատոր Հայոց պատմութիւնը, և եթէ
 այսչափ իրողութիւններ գիտէք և չէք յայտնել,
 ըսել պիտի ըլլայ որ Ձեր կիրքը առաջ քշել կու-
 ղէք և ճշմարտութիւնը ծածկել կըլլայ Ձեր փա-
 վաքը և կը նախատէք ստութեամբ, ժողովուրդ
 մը որ իւր ներկայութեամբը զՁեզ կը պատ-
 սէ :

Մեծապատիւ Տօքթէօր Նիշմանեան էֆէնտին
 օրինակով մը կուզէ հաստատել իւր այս խօսքը
 « այսօր ուղիղ դատողութեանց դարու մէջ կապ-
 րինք միթէ սխալ խորհրդածութիւնք ամեն օր
 յայտնի չէ՞ն քարոզուիր » և կըսէ օրինակ բերելով
 « Սրաբացիք ասեն մը բոլոր Եւրոպիոյ ըյս կը մա-
 2

տակարարէին » : Կը հարցնեմք թէ ո՞ր պատմութեան էն էն յայտնի է Արաբացոց Եւրոպիոյ լոյս մատակարարելը , ե՞րբ մատակարարեցին Արաբացիք այս լոյսը , անշուշտ երբ բոլոր Սպանիոյ և Իտալիոյ և Գաղղիոյ մէկ մասը քանդեցին և դուրսէ իրենց այրելու և քանդելու ջանք լոյսն էր որ դուրս յերազի քաղաքականութեան լոյս կարծեցիք , կարելի է , վասն զի գիտնական անձանց ուսմունքը ստեպ ուղեղնին կը թմրեցնէ որով դիւրաւ ասրբեր և իրարու հակասական բաներ մէկգմէկու հետ կը շփոթեն : Սակայն կարելի է Մեծապատիւ բժիշկը քաղաքականութեան նիւթական մասին համար կըսէ թէ , Արաբացիք Եւրոպիոյ լոյս կը մատակարարէին և այն ատեն իրաւունք ունի ըստ մասին , վասն զի Արաբացիք ստուգիւ ունեցան գեղարուեստներ ճարտարագետութիւն եւայլն , եւայլն , և թէ որ կողմէ Երչմանեան էֆէնտին իրենց չունեցածն ալ , այս նիւթական մասին համար իրենց կը շնորհեմք , սակայն քաղաքակրթութիւնը բուն բարոյական մասին յայտնի կըլլայ : Այսօրուան օրս Անգղիա քաղաքակրթեալ է ճշմարտապէս կրնամք ըսել , թէ որ կը տեսնենք թէ Լոնտրաի մէջ մարդիկ կան որ անօթութենէ կը մեռնին , ի՞նչ օգուտ ուրեմն Անգղիացոց իրենց գեղեցիկ տներէն փողոցներէն հարըստութենէն և ուսմունքէն և ուրիշ շատ մը դիւրութիւններէն որ նիւթական քաղաքականութեան արդասիքն ըստ մասին կրնան ըլլալ , եթէ միւս կողմանէ չկայ սկզբունք մը որ հարուստները աղքատաց վրայ ՚ի գութ շարժէ , և Աւետարանէն զատ ի՞նչ բան կրնայ բնաւ տալ այսպիսի սկզբունք մը : Ռուսոյի Վոլթեռի և Բուֆֆէնտորֆի սկզբունքը « Սիրէ ինքզինքդ ամէն բանէ վեր և քու ընկերքեզի համար » այս ժողովրդեան լոյս տուած է , ահա Ձեր Փիլիսոփայներուն Ստուածաբանութեանէն ունեցած տարբերութիւնը , ահա Փիլիսոփայութիւնը որ ծնունդ տուաւ Գաղղիոյ յեղափոխութեան և տպագրութեան ազատութիւնը ցամաք երկրի վրայ կանգնեց , ահա միով բանիւ Երչմանեանի քաղաքակրթութեան աղբիւրը (անձնասիրութիւնը որ ըստ իրեն պիտի լուսաւորէ Հայոց ազգը , այս ճիշդ բարեկենդանի խաղի կը նմանի , երանի մեր ազգին որ դատեր է Երչմանեանի պէս բժիշկ մը իւր ցաւոցը դարման մատուցանելու համար : Արդ գիտցած ըլլաք մեծապատիւ Տոբթէօր որ Հայ ազգը եթէ չունի բարոյական քաղաքակրթութիւն Անգղիոյ չափ ալ մեծ ըլլայ , Գաղղիոյ պէս ալ ազատ նորէն կը կործանի կը բաժանի և կը տկարանայ և ճշմարիտ բարոյականէն դուրս ի՞նչ աստիճանի զարգացումն և մեծութիւն որ ունենայ փուճ է և անտեւ : Պէտք է մեր ազգին բարոյական ճշմարիտ լուսոյ մը վրայ հիմնեալ քաղաքակրթութիւն մը , այն ատեն ազգին հոգին կարթննայ , կը գրտնէ իւր անունը , կուժոյնայ և առաջ կերթայ , նիւթականը ինքնիրեն ալ կուգայ ստիպեալ առաջնոյն ետեւէն , վասն զի բարոյականը նիւթականին հիմն և աղբիւրն է , և այն ժամանակ կը տեսնուի որ Երչ-

տաց վրայ ՚ի գութ շարժէ , և Աւետարանէն զատ ի՞նչ բան կրնայ բնաւ տալ այսպիսի սկզբունք մը : Ռուսոյի Վոլթեռի և Բուֆֆէնտորֆի սկզբունքը « Սիրէ ինքզինքդ ամէն բանէ վեր և քու ընկերքեզի համար » այս ժողովրդեան լոյս տուած է , ահա Ձեր Փիլիսոփայներուն Ստուածաբանութեանէն ունեցած տարբերութիւնը , ահա Փիլիսոփայութիւնը որ ծնունդ տուաւ Գաղղիոյ յեղափոխութեան և տպագրութեան ազատութիւնը ցամաք երկրի վրայ կանգնեց , ահա միով բանիւ Երչմանեանի քաղաքակրթութեան աղբիւրը (անձնասիրութիւնը որ ըստ իրեն պիտի լուսաւորէ Հայոց ազգը , այս ճիշդ բարեկենդանի խաղի կը նմանի , երանի մեր ազգին որ դատեր է Երչմանեանի պէս բժիշկ մը իւր ցաւոցը դարման մատուցանելու համար : Արդ գիտցած ըլլաք մեծապատիւ Տոբթէօր որ Հայ ազգը եթէ չունի բարոյական քաղաքակրթութիւն Անգղիոյ չափ ալ մեծ ըլլայ , Գաղղիոյ պէս ալ ազատ նորէն կը կործանի կը բաժանի և կը տկարանայ և ճշմարիտ բարոյականէն դուրս ի՞նչ աստիճանի զարգացումն և մեծութիւն որ ունենայ փուճ է և անտեւ : Պէտք է մեր ազգին բարոյական ճշմարիտ լուսոյ մը վրայ հիմնեալ քաղաքակրթութիւն մը , այն ատեն ազգին հոգին կարթննայ , կը գրտնէ իւր անունը , կուժոյնայ և առաջ կերթայ , նիւթականը ինքնիրեն ալ կուգայ ստիպեալ առաջնոյն ետեւէն , վասն զի բարոյականը նիւթականին հիմն և աղբիւրն է , և այն ժամանակ կը տեսնուի որ Երչ-

Գրու
Երչ
747

Ար
Երչ

1917

Մանեան էֆէնտին որչափ սխալ տեղ կը փնտռէ ե-
 դեր իւր գանել ուզածը, նոյնը հակառակ փոր-
 ձառութեամբ մը կարելի է ազդն ալ հասկընայ ինչ-
 պէս այնքան ազգեր կը հասկընան, և Վաղղիոյ աղ-
 զը որ ուրիշներուն պարագլուխը եղած էր ճշմա-
 րիտ քաղաքակրթութիւնը գանելու, կրսիսի այսօր
 տարբեր եղանակով մտածել, և լաւ հասկըցաւ թէ
 իւր 1789 ին բրած յեղափոխութեամբը չէ որ քա-
 ղաքակրթութիւնը գտաւ և աւելի քիչ ապագրու-
 թեան աղատութեամբ, անշուշտ մեր ազգն մէկ
 կամ միւս կերպով գասի հասկընալով Շիշմանեա-
 նի ծոցէն ելածին հարկաւորութիւն չի պիտի ունե-
 նայ, վասն զի իւր ծոցէն ելածը ուրիշ բան կը հատի-
 շիմա կարգը կուգայ Ձեր Պոսիւէի վրայ ը-
 րած գառատանին, Ձեր կրօնմ, թէպէտ դուք
 ալ ուրիշէն առած ըլլաք, վասն զի ուրիշի գա-
 տատանին հաւնելով նոյնը դուք ըրած կըլլաք :
 Ձեզ կերպով մը կը շնորհեմք որ Պոսիւէ որ և ի-
 ցէ պատմական մեծ գէպք մը չի գրելով պակաս-
 թիւն մը ըրած ըլլայ, սակայն այս բանին համար
 ալ իրեն պէտանն մը կրօնամուլ անուանել, սոի Ձեր
 չափազանց կիրքը կը յայտնէ, արդեօք աղատա-
 մտութեան ուրիշ աւելի աղատագոյն տեսակը հը-
 նարեցիք, բայց հարցուցի՞ք այն Անգղիացւոյն ի՞նչ
 բանէ Պոսիւէի տիեզերական պատմութեան վրայ
 գրած ճառը, ինքը չէր գիտեր անշուշտ որ Ձեզի
 զրուցեր և դուք անկէջ աւելի քիչ գիտէք անոր
 աշակերտը ըլլալովսիդ : Ասկէջ զաւ Պոսիւէի պէս

մեծ ոգի մը որ ամեն տեսակ գիտնոց առջեւ մեծ
 համբաւ ունի, Փիլիսոփայեց, Աստուածաբանեց,
 Պատմաբանեց, և նոյն այս իւր գիրքը զոր դուք
 խօսելու ատեննիդ առասպել կոչեցիք իւր գլուխ
 գործոցը նկատուած է, համայն Եւրոպիոյ նա մա-
 նաւանդ Վաղղիոյ դպրոցաց մէջ ամենէն ամենաս-
 տորին դասերէն մինչեւ բարձրագոյն դասերը տղա-
 յոց ձեռքն է և զայս գիրքը ապօղբ և իրենց ձեռ-
 քը սուտը Վաղղիական Տէրութիւնն է որ չէ թէ
 միայն կրօնամուլ չէ Ձեզի պէս, հապա բուրբովին
 անկրօն, ասկէջ վերջ գեռ կը համարձակիք ըսելու
 թէ «Ս,հա այսպէս ազիտութեան կը դատապարտէ
 կրօնամուլութիւնը զժողովուրդը մը » Պոսիւէ կրօ-
 նամուլ ըլլալովը ազէա կըլլայ, հեռեւաբար իրեն
 վրայ հիացող մեծ ազգը. արդ Շիշմանեան Տոք-
 թէօր մեծապատիւ բժիշկ, Պոսիւէ ազէա, դուք
 ի՞նչ էք և ի՞նչ անուն տալու է Ձեզի : : : : Ի՞նչ
 լոյս ուրեմն պէտք է յուսալ Ձեզի պէս մարդկանց-
 մէ մեր ազգին համար, որ կրից և ատելութեան
 և չարութեան և նախանձու հոգւով կը թունաւո-
 րէք ամէն բարիք չարի կը մեկնէք ամենէն լաւա-
 գոյն խորհուրդները, Ձեզի համար բարին միայն
 Վօլթէնի սկզբունքներն են որոնց ամենէն մեծը
 և երեւելին այս է թէ «Խօսիւնք սուտը որչափ կըր-
 նանք, անշուշտ աշխարհքիս մէջի միլիօնաւոր մարդ-
 կանցմէ գոնէ մին կրնանք խաբել » : Աստի Շիշ-
 մանեանն ալ իւր վարդապետին սկզբանցը հեռե-
 ւելու համար ազգը խաբելու ելեր է, իրեն համար

բաւական է որ խաբել ըլլայ ինչ կերպով ըլլայնէ
 ըլլայ, նոյն իսկ իրարու հակասական նախադասու-
 թիւններով, օրինակի յաղագաւ, Հայ ազգին մէկ
 մասը փռանկանալու փափաք ունի կըսէ, Յ. Տ. Յա-
 կովը Տիւզ ստորագրութիւնը առաջ քշելով, մեր
 բժիշկը զատի ազդութեան ոգւոյն դէմ ըլլալուն
 համար չի հաւնիր և իրաւունք ունի և միւս կող-
 մանէ Բրթթէսթանդից խելքի դէմ ունեցած սկզբ-
 բունքները կը քարոզէ և կուզէ մտցնել զանոնք
 ազգին մէջ, որպէս զի յետին անմտութեան և յի-
 մարութեան անդունդը ձգէ զայն, (գիտէի՞ք Պ. բը-
 ժիշկ Չեր խօսած ճառին ասչափ ազգատեաց բան
 մը ըլլալը, ո՛չ անշուշտ, անսէ՞ք ս՛ր կը տանին
 զձեզ տգիտութիւնն և կիրքը) Եւրոպայի ազգաց
 քաղաքակրթութեանը մեր ազգին համար նախան-
 ձախնդիր կըլլայ, և մենք ալ կարծեմք թէ ըստ
 Տոքթէօրին փռանկանալ ուղղներուն և իրեն մէջ
 տարբերութիւն մը չի կայ, վասն զի եթէ փռան-
 կանալ ուզելը ուրիշ բան չէ եթէ ոչ փռանկաց այ-
 սինքն առ հասարակ Եւրոպացւոց սովորութիւնքն
 առնուլ, արդէն ազգին մէջ մանաւանդ մայրաքա-
 ղաքս ի՞նչ սովորութիւն մնացած է որ Եւրոպական
 չըլլայ այլ ազգային, եթէ այս է իւր սիրտը ներդա-
 ցնողը բան մը չէ, բայց կարծեմք թէ այս փռան-
 կանալ բառին տակը Տոքթէօր էֆէնտին ուրիշ բան
 մը պահած է, — Աթոլիկանալ կը հասկընայ այս
 բառովս, սակայն բոլոր աշխարհքս գիտէ թէ քանի
 որ Աթոլիկները Էջմիածնականացմէ բաժնուեցան

Handwritten notes in Armenian script at the bottom of the page.

իրենց Հայ ըլլալը կը շարունակեն և երբէք Հայու-
 թիւնն ուրացած չէն և չեն ալ ուրանար, այլ իրենց
 Հայ անունը պարծանք կը սեպեն, վասն զի իրենց
 ձեռքով Եւրոպա զազգը ճանչցաւ, իրենց ձեռքով
 Հայ անունը պատիւ ստացաւ բովանդակ Եւրոպիոյ
 առջեւ, այսչափս գոնէ գիտէ Տոքթէօրը, և որ ըստ
 մասն է իւր դաստիարակութիւնն ալ չուրանար ան-
 շուշտ: Արդ երբ ինքը ուրիշներու Փռանկանալու
 փափաք կուտայ զուր տեղը, միւս կողմանէ ազգը
 Ամերիկացիներու կամ նորադանդ ընելու կը ջանա,
 Մէօսիէօ լը Տէոքթէօր ճշմարտութիւնը Ձեզ ըս-
 տանձնեալ կարծելով այսչափ ցածը ի՞նչալը խայ-
 տառակութիւն է, Ձեր գիտնական պատուոյն չի պի-
 տի վայելէր բնաւ այսպիսի հակասութեանց մէջ իյ-
 նալ, Նորադանդից Սուրբ գրոց բացատրութեան
 եղանակը կը քարոզէ մեզի որ բոլորովին հակառակ
 է Հին ՀԱՅՐԵՆԻ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ կարգացը և սովորու-
 թեանցը և աւանդութեանցը, նմանապէս աշխար-
 հաբառ լեզու թարգմանուած Աստուածաշունչը
 պատուական սեպել և բժշկիչ մեր գրաբառ լեզ-
 ւոյն համար ունեցած հիւանդութեանը, զատոնք
 քարոզել ուրիշ բան չէ եթէ ոչ Հայոց Հին ՀԱՅՐԵՆԻ
 ԵԿԵՂԵՑԻՈՅՆ սկզբանցը և լեզուին դէմ պատե-
 րազմ բանալ (երբ Լատինաց Միսիօնարներու յա-
 ըուցած կրօնական խնդրոց համար Աստուածաբա-
 նական նախապաշարմունքներ կըսէ) վասն զի քիչ
 մը աւելի առաջ երթալով կըսէ թէ այս Նորա-
 զանգներէս առաջ մեր ազգին Սուրբ Գրոց վրայ

ունեցած գիտութիւնը ուրիշ բան չէր եթէ ոչ ինչ որ խել մը խաբերայ և ազեա եկեղեցականներ կը բացատրէին, ի՛նչ խօսելու փափաք առանց իր գրուցածը մտածելու, ուստի Ձեզի բսեմք որ որչափ մեր ազգը չի սիրեր զանոնք որ կուզեն փռանկանալ եթէ կաննէ և կը խորշի անոնցմէ նոյնչափ և առաւել եւս կը խորշի անոնցմէ և չի սիրեր զանոնք որոնք իրեն նորազանգից սկզբունքները կը քարոզեն: Չարմանալի՛ բան չի մտածեցի՛ք բնաւ որ Ձեր ուրիշի վրայ դատապարտածը ուրիշ մը աւելի իրաւամբ Ձեր վրայ կրնար դատապարտել, այս ատիճանի կուրութիւն, այսչափ յանձնապատասանութիւն ճշմարտութիւնը ստանձնեալ կարծել հէ՛՛ Պ. բժիշկի. երանելի են բժիշկները որ այսպիսի յայտնութիւններ կուենան, սակայն ամենքը այս բաղդը չունին:

Ազնիւ Տոքթօրին, հիմա դուք չէք ուրանար որ Կաթոլիկութիւնը և Քրօթեսթանգութիւնը մեր ազգին քաղաքակրթութեան գործիք եղան, սակայն միւս կողմանէ ալ կըսէք թէ այս Կաթոլիկութիւնը և Քրօթեսթանգութիւնը ազգին մէջ իրենց սահմանները գտան, ուրեմն ասկեց ի՛նչ հետեւցնենք, այս՝ թէ այս գործիքներուն մեր ազգին բերած քաղաքակրթութեան մասը դադրեցաւ ընականաբար, և ալ ասկից վերջ եթէ ձգեցին ազգին մէջ քաղաքակրթութեան հետքեր, այն ալ իւրաքանչիւր կրօնքը իւր հետեւողաց մասին մէջ այսինքն Կաթոլիկաց և Քրօթեսթանգից մէջ:

այս քաղաքակրթութեան գործիք

ուրեմն հի՛ն հայրենի կոչած կրօնքնիդ քաղաքակրթութեան գործի մը ի՛նչո՛ւ չեղաւ ազգին և ինչո՛ւ չըլլար, և դուք ինչո՛ւ կը ցաւիք ազգին այն պղտի մասին որ այս կրօնից հետեւեցաւ, և կուրախանայք այս կրօնից մեր ազգին մէջ սահման դանեխուն համար, ուրեմն քաղաքակրթութեան ազգին մէջ տարածուելուն ինչո՛ւ այսչափ նախանձախնդիր կըլլաք, եթէ այս քաղաքակրթութեան գործիքներէն կը խորշիք եթէ չէ երկուքէն գոնէ մէկէն որ եթէ չէք կրնար բոլորովին անհետացնել Քիմիական (amalgam) մը ընելով, գոնէ կուզէք սերտ միաւորութիւն մը հաստատել Լատինական (juxta-position) ով, որ մի և նոյն բանը ըսել է այսինքն ուզել միացնել յառաջադիմութեան և քաղաքակրթութեան գործիք մը յետադիմութեան գործիքի մը հետ, և ինչ շաղխ կրցեր է երբէք իրարու հետ միաւորել երկու հակասական բաներ այսինքն սուտը իրաւի հետ, բարին չարի հետ, կը զարմանամք Տոքթօրին որ այս անգամ այսպէս խելքի դէմ նախադասութիւններ առաջ կը բերէ, սակայն ի՛նչ կրնանք ըսել իւր հաւատացածը կը քարոզէ, «ԵՒ ԵՅ ԱՍՈՐ ԿԸ ՀԱԻԱՏԱՄ» կըսէ պատգամաբար, զարմանալի՛ հաւատք, նոր օրինակ ճշմարտութիւն երկու անգամ երկուքդ ի՛նչ կը հաւատաս որ ընէ մեծապատիւ Տոքթօր Երշմանեան էֆէնտի:

Հիմա մեծապատիւ և սքանչելի և կըրտա Տոքթօր, Ձեր տետրին մէջ ուրիշ բան մ'ալ կայ որ



Ձեր ամենամեծ կիրքը կը յայտնէ և մեր սիրուն ալ մէծապէս կը վերաւորէ «Իրը այնպէս պահանջեց կըսէք որ ազգութեան օգտակար այս Մուրաս — Ռափայէլեան դպրոցաց ազգին փոքր մասին յատկանալը եղաւ, որպէս զի ազգին համար անոնց զաւկընները չի կորսուին, արդէն այս ժողովուրդը կրօնական կապերը ազգին ընդհանուր եկեղեցւոյն հետ եղած, լեզուին հետ ալ խզելու պարտականութիւն ունենալով, հին անցեալը ամենեւին չի դիտնալով, իր ծագումը ոչ թէ փնտռելու այլ մոռնալու և չի տեսնելու փափաք ունենալով (որուն մեծ մասին վրայ ըսածներս դեռ յայտնի կերեւան) կորուստ մ'էր ազգին համար նիւթական և բարոյական » է՛հ, Պարոն բժիշկ ո՞վ գրած էր մեր ազգին այսինքն կաթոլիկաց իրենց լեզուին հետ ունեցած կապը խզելու պարտականութիւնը, ո՞վ ազգած էր իրեն իւր ծագումը մոռնալու փափաքը, Հի՛ հայրենի ընդհանուր Եկեղեցին բաժնուելէն ետեւ, Հո՞ովմ ըսել կուզէք, չե՞մ կարծեր վասն զի կը տեսնէք՝ մինչեւ ցարդ Հռովմայ մեր ազգին ըրած բարիքը, ո՛չ մեք այլ բիւր տեսակ՝ Եկեղեցիներ ՚ի դաւառս և ՚ի Մայրաքաղաքի Օսմանեան Պետութեան, դպրոցներ՝ երկսեռ վարժարաններ ուր արդայք իրենց մայրենի լեզուն կը սորվին և պարտականութիւն ունին սորվելու և այս դպրոցներս թէ Թուրքիոյ հողը և թէ յԵւրոպա, Եւրոպա երբ դպրոցներ կըսեմ մէկ հատ չի հասկընաք այլ չորս կամ հինգ հատ, Հռովմայ ձեռքով կըօնի այնպի-



սի ազատութիւն մը որ նոյն իսկ մայրաքաղաքին ուրիշ ամեն ազգերը կը նախանձեցնեն, սակայն այս բաներս Ձեզ համար ոչինչ են, բաւական է որ բարին ՚ի չարն մեկնելու սովորութիւնն ունիք, ընդհանարար Ձեր մեծութեան զգացումն ալ չունիք: Ասոնց վրայ աւելցուցէք որ Եւրոպա կաթոլիկաց ձեռքովը միայն ճանչցաւ Հայ ազգը, կաթոլիկներն էին որ իրենց սովորեցուցին իրենց հին ծագումը, անցեալ մեծութիւնը հիմակուան թըշուառութիւնը, այն ատենուան դիտութիւնը հիմակուան տգիտութիւնը, սակայն գիտե՞մ որ այս խօսքերս Ձեր կիրքը՝ չեն մարեր, ՚ի վերայ այսր ամենայնի, գոնէ ճշմարտութիւնը երեւան կընայ ելլել այս կերպով:

Շիշմանեան էֆէնտին, անտեսանելի երազ մ'ալ կը տեսնէ, մեկ սերս միաւորութիւն մը ազգին երկու մասանց մէջ, կը հաւատամ կըսէ այս բանս կընայ ըլլալ, կընանք մտածել, Տոքթէօրը հաւատաց մի կընայ ըլլալ, սակայն խելքի գէ՞մ է, բաւական է որ հաւատաց կընայ ըլլալ, աղէկ որ տրամաբանութիւնը բանականութեան վրայ հիմնեալ դիտութիւն մ'է, չէ՛ նէ մեր մեծապատիւ Տոքթէօրը անոր ուրիշ կերպն ալ կը հնարէր անշուշտ, սակայն մենք Տոքթէօրին երազը տեսնենք, հարցնենք առաջ թէ, ազգը այս սերս միաւորութեան համար դիւրի մը պիտի ունենայ թէ չէ՛, անշուշտ առանց դիտոյ մարմին չի կընար ըլլալ, ուստի գլուխ ալ կայ և չորս հինգ հատ, սակայն ամենքն ալ իրա-

ne
by
sup

պը

րու հակառակ որոնց ամեն մէկը ազգին մէջ իւր հետեւողները ունի և բնական է որ եթէ այս կերպով ազգը սերտիւ միանալու ըլլայ նէ երբէք չի պիտի քակտուի, վասն զի Եիշմանեան Տոքթօրը կը հաւատայ թէ այս երազը կրնայ 'ի գործ դրուիլ, և ճշմարտութիւնն ալ իրեն ստանձնեալ կարծելէն ետեւ. ո՞վ կրնայ իրեն դէմ կենալ, բայց այն ժամանակը մեր ազգը իւր անունը պիտի փոխէ և Քալիֆոնի Եայէն պիտի կոչուի, և ասոր դէմ մեզի Եիշմանեան բաղմահմուտ Տոքթօրը չի պիտի կարենայ ըսել թէ, այն չորս կամ հինգ գլուխները կրօնական ըլլալովսին չեն կրնար քաղաքականութեան մասին գլուխ ըլլալ, վասն զի եթէ այնպէս ըլլար, այն ատեն մենք ալ չորսի կամ հինգի տեղ պիտի ունենայինք չորս կամ հինգ միլիոն, օրինակի յաղաղաւ, դուք և ես Ձեր նուատ և փոքր ծառան իրարու բոլորովին ներհակ ճամբաներով կուզենք ազգը քաղաքակրթել, այս տարբերութեամբ որ դուք Հելիօկապալի սկզբանցը կը հետեւիք այսինքն ամեն կրօնք դուրս ձգելով կամ ամենքը միատեղ ներս առնելով, իսկ ես միայն մէկ հատիկ կրօնքով, ես արձակ համարձակ վաղելով իմ ճամբաս լուսաւորեալ ըլլալովը և դուք մառախլապատ ճամբու մը մէջ, Էջմիածնական Մահմէտական, Կաթոլիկ, Բրօթեթման Հրէայ ամենքն ալ այս մթութեանը մէջ իրարու զարնուելով և Ձեր ձայնն ալ այն աղմկին մէջ հազիւ լսուելով, ամեն բարեկենդանի ասանկ խողեր չեն խողցուիր:

Հիմա մեր ցնորակոծ Տոքթօրը երազէ գործքի ձեռք կը զարնէ, տղայոց նախակրթական ուսմանց տեսուչ ըլլալովը Օրթոդոքս Լուսաւորչեան Վարժարանին մէջ, կարգելու տղայոց Եկեղեցւոյ մէջ քանի մը պաշտամանց ծառայելու վասն զի լաւ հոգ տանելու է տղայոց կրթութեան, ինչու որ այս նախակրթական ուսմունքն է որ կը խոստանայ իրեն իւր երազը օր մը 'ի գործ դրուած տեսնել, միութարութիւն մ'է որ իրեն չի զլացուիր, միայն Պահտիարեանը կը ներզանայ որ Եիշմանեան Տոքթօր Եկեղեցական պաշտամանց կարգադրութեանը ձեռք է զարկեր: Տոքթօր զինքը կը կոչեն, բայց Կաթոլիկի կոսութիւնը ուսկից ելաւ: Միծաղաչարժ բան:

Եւ յիրաւի եթէ կրբոտ մասերը չըլլային բուրովին ծիծաղաչարժ ալ պիտի ըլլար իւր Լուսատիպ տետրը, սակայն ինչ և իցէ մենք դեռ երկու խօսք ալ Հասուն Գերապայծառին խաբեբայութեանը և կրօնամոլութեանը վրայ գրուցելով վերջացնենք մեր խօսքը:

Ուրեմն այս Հասուն Գերապայծառին գալով որ իւր խաբէութեամբը և կրօնամոլութեամբը զՀամազգեաց ընկերութիւնը կործանեց «Որով մեծ ազդուտ գործք մը ըրաւ, վասն զի Ձեզ մեծապատուութեան պէս խելքի դէմ բաներու չի հաւատար այն մեծ մարդը, այլ իրաւցնէ այն կը փրնտրուէ ինչ որ կրնայ զազգը առաջ տանիլ ճշմարիտ քաղաքակրթութեան մէջ, այս անձին Ձեզի պէս

այս անձին Ձեզի պէս
 ամեն

ասելու թեան ոգւով և նախապաշարմամբ կուրացեալ անձանց քանի՛ քանի՛ անգամ զո՛հ ըլլալը աշխարհք դիտէ, նոյն իսկ իւր թշնամիները, որք մինչեւ հիմա կը պոռան կը դռնն և չարիք չեն ձգուեր դժսխոց մէջ որ այս մարդս ըրած չըլլայ, սակայն առանց երբէք ամենափոքր չարիք կարելու փորձել իւր վրան. Հասուն Գերապայծառ կոչած անձդ ես Արիստոտելոս պիտի կոչեմ, վասն զի խել մը ձեզի պէս մարդիկ և եկեղեցականաց անկարգ դաս մը բոլորնիդ ալ ասելու թեան և անհնազանդութեան և չարութեան և նախանձու սպառազէն լեալ» զինքը հալածեցիք, վասն զի չի կրցաք իւր արդարութիւնը տանիլ, հալածելու համար ամեն ճիգ ՚ի դործ դրիք, մինչեւ ճշմարիտ եկեղեցւոյն քողը որ դիմակ առած էիք Ձեզ միամիտները խաբելու մեկդի դրիք և ուրացաք Ձեր սուրբ հաւատքը, իջաք այլակրօնից ոտքին տակի փոշին լղեցիք և աւելի ընտրեցիք անոնց ձեռքէն կրօնքի և հաւատոյ դուրս մը ընդունիլ քան յեղեցւոյ Գրիստոսի կարգադրութեանցը հնազանդիլ, հալածեցիք վասն զի խաւարին ոգիներն էիք որ լուսոյն հետ չեն կրնար կենալ, սակայն լոյսը մերժեց խաւարը: Սհաւասիկ Մեծ. Հասունը արտոր կերթայ առանց դատաստանի առանց յանցանքի և առանց նոյն իսկ խեղակոյտ վճռոյ մը դատ կուզէ, սակայն զինքը ամբաստանող չի գտնուիր, հրատարակու յայտնի կրնէ թէ ով որ իրմէ իրաւունք մը ունի իւր իրաւունքը իրեն դարցնելու պատրաստ է, սակայն ոչ ոք կերեւի

այլ միտոյն ձայներ, խաբերայ է կրօնամուլ է, զմեզ Ծուհնկ կրնէ, ճիգովի թէ, բարձ ՚ի մէջ խաչեցոցի, Սհաւասիկ Հայ Արիստոտելոս անհաւասիկ Մեծ. Հասունը և ահա իւր թշնամիները ինքը դնաց արտոր և դուք ի՞նչ եղաք, անշուշտ զագղը փրկեցինք պիտի ըսէք, սակայն կարծեմ թէ երկնից անէծքը ժողովեցիք Ձեր դիտուն վրայ, Հրէից ազգն ալ իւր Փրկչին նոյնը ըրաւ և այսօր բոլոր այխարհքիս մէջ յայտնի կը ցուցնէ իւր ճակտին վրայ իւր Սնաթեման, մենք ալ վախնանք ուրեմն, որ այս բռնած ճամբայներով բոլորովին չի կործանինք, արդէն այս վիճակը որ ինկեր ենք, պատմութիւնը մեզ կը վկայէ թէ ուրիշ պատճառաւ չէ, եթէ ոչ մեր անմիաբանութեանը, մեծ երուն անհնազանդութեանը և մեր մատնութեանը պատճառաւ, մեր պատմութեանը մէջ չի պիտի պակսին երբէք Վասակներ, ինչպէս նաեւ չի պիտի պակսին Վարդաններ, առաջիններուն սակայն վատահամբաւութիւն և անարգանք պահուած է ցյաւիտեան և վերջիններուն պատիւ նոյն իսկ չարաց քով: Սյապէս ահա Հասուն Գերապայծառը պատմութեան մէջ անմահ էջեր պիտի լեցնէ, դուք ալ բաւական մեծագոյն մասմբ պիտի ունենաք անոր կշտամբանքէն, սակայն դուք և ինքը չիմեռած, դուք պիտի տեսնէք, Ձեր անարգած վիմին դուրս անկեան ըլլալը:

Արիստոտել Հայ Գ

Р. У.

№ 7099

Р. У.

№ 7099